ԶԵԿՈՒՑԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի համագյուղացիներ և հյուրեր, թույլ տվեք ձեր ուշադրությանը ներկայացնել 2012 թվականի 1-ին կիսամյակում գյուղապետարանի աշխատակազմի , իմ և ավագանու կողմից կատարված աշխատանքները :

Նախապես ցանկանում եմ ձեզ տեղեկացնել, որ համայնքի բնակչության թիվը կազմում է 1830, տնտեսությունների թիվը՝ 307:

2012 թվականի 1-ին կիսամյսակում Ջրարբիի գյուղական համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին կատարել է մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել նպաստելու համայնքի բնակչության բարեկեցության ապահովմանը և համայնքի ներդաշնակ զարգացմանը և այդ աշխատանքների մասին ամբողջական և հավաստի տեղեկատվություն է տրամադրվել համայնքի բնակիչներին:

Գյուղապետարանի աշխատանքները 1-ին կիսամյակում եղել է առավել բաց, թափանցիկ բնակիչները հնարավորություն են ունեցել սպառիչ տեղեկանալ գյուղապետարանի գործունեության մանրամասներին:

Համայնքում գործում է մանկապարտեզ, հաճախում են 70 երեխա: Տարեսկզբին հաստատված նախահաշվի համաձայն համայնքի բյուջեից որպես ընթացիկ անհատույց վճարներ՝ սուբսիդիան «Ջրարբի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերտությանը 1-ին կիսամյակում հատկացվել և ամբողջությամբ փոխանցվել է 3277100/ երեք միլիոն երկու հարյուր յոթանասունյոթ հազար հարյուր/ դրամ գումար: Մանկապարտեզի աշխատանքները պարբերաբար վերահսկվում են գյուղապետարանի կողմից: Գյուղապետարանը հնարավորինս աշխատում է հոգալ մանկապարտեզի խնդիրները, առաջին կիսամյակում նվիրատվության պայմանագրի համաձայն՝ որպես անհատույց գույք, ձեռք բերվեց և մանկապարտեզին հանձնվեց հատակի գորգ և 16 հատ աթոռ, որոնց ընդհանուր գումարը կազմում է 146000/ մեկ հարյուր քառասունվեց հազար/ դրամ, Արդյունքում փոխվեց մանկապարտզի գորգը :

2012թվականի 1-ին կիսամյակում համայնքի ավագանու որոշմամբ համայնքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, 1-ին միջոցառումը, որի ընդհանուր գումարը կազմում էր 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ, գյուղապետարանը կազմակերպեց Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ին կապակցությամբ:

Միջոցառման ժամանակ համայնքի թվով 58 կին թոշակառուներից յուրաքանչյուրին տրամադրեց 5000 / հինգ հազար/ դրամ արժողության նվերներ: Նույն օրը՝ միջոցառման ժամանակ գյուղապետարանը համայնքի միջնակարգ դպրոցի անձնակազմի թվով 22 կին աշխատողներին և մանկապարտեզի թվով 10 կին աշխատակիցներին նույպես նվիրեց 5000 / հինգ հազար / դրամ արժողությամբ նվերներ: Տոնի առթիվ նվերներ տրամադրվեց նաև համայնքում միակ կին ազատամարտիկին և միակ կին ավագանու անդամին, բուժկետի 2 աշխատակիցներին:

2-րդ միջոցառումը կազմակերպվեց Հաղթանակի և խաղաղության տոնի Մայիսի 9-ի կապակցությամբ: Միջոցառմանը հրավիրված էին Ղարաբաղյան պատերազմին մասնակցած համայնքի ազատամարտիկները:

Միջոցառման կազմակերպման համար համայնքի բյուջեից հատկացվեց 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ գումար:

Զրարբի գյուղական համայնքում Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման նպատակով համայնքում կազմակերպվեց վոլեյբոլի տղամարդկանց մրցաշար՝ կազմված 4 թիմերից: Համայնքի ավագանու որոշմամբ սպորտային միջոցառման ժամանակ 1-ին և երկրորդ տեղերը հաղթող խմբերը պարգևատրվեցին համապատասխանաբար 50000 / հիսուն հազար/ և 25000/ քսանհինգ հազար / դրամներով:

Միջոցառում կազմակերպվեց նաև Վերջին զանգի կապակցությամբ: Համայնքի թվով 10 շրջանավարտներից յուրաքանչյուրին գյուղապետարանը նվիրեց 12000 /տասներկու հազար / դրամ արժողությամբ նվերներ:

1-ին կիսամյակում գյուղապետարանը 198000 / մեկ հարյուր իննսունութ հազար/ դրամ հատկացրեց համայնքի միջնակարգ դպրոցի բոլոր դասարաններին պատմամշակութային օջախներ տանելու և էքսկուրսիաներ կազմակերպելու համար:

Ցանկացած առիթով գյուղապետարանը միշտ պատրաստ է աջակցելու համայնքի միջնակարգ դպրոցին: Ցավոք Զրարբի համայնքի հիմնախնդիրներից մեկն էլ այն է, որ համայնքը չունի դպրոցական տիպային շենք: Դասերը անցկացվում են նախկին մանկապարտեզի մասնաշենքերից մեկում: 1997 թվականի մարտի 14-ի N 51-Ն որոշմամբ Զրարբի համայնքին փոխանցվող գույքի ցանկը հաստատելու ժամանակ, մանկապարտեզի շենքը համայնքին չի փոխանցվել և առաջին պետական գրանցման ժամանակ դուրս է մնացել պետական գրանցումից: Վերը նշված խնդիրը լուծելու նպատակով Զրարբիի գյուղապետարանը 2012 թվականի մարտին հայցով դիմեց Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարան Զրարբիի գյուղապետարանի՝ գույքը տիրազուրկ ճանաչելու և

համայնքի սեփականության իրավունքը նույն գույքի նկատմամբ սահմանել պահանջի մասին դիմումով: Հայցադիմումը ընդունվել է վարույթ և գործընթացի մեջ է:

Համայնքի ավագանու որոշմամբ ամսական 60000 /վաթսուն հազար/ դրամի պայմանագիր է կնքվել Ջրարբի համայնքի բնակիչ Ս.Բաղդասարյանի հետ, ըստ որի համայնքում յուրաքանչյուր շաբաթ, շաբաթական երկու անգամ, իրականացվում է աղբահանման աշխատանքներ, որի արդյունքում մաքրվել են համայնքի փողոցներն ու մայթեզրերը: Աղբահանման աշխատանքների դիմաց վարձատրությունն ամբողջությամբ կատարվում է գյուղապետարանի միջոցներով: 2012թվականի 1-ին կիսամյակում աղբահանման աշխատանքների դիմաց վճարվել է 231000 /երկու հարյուր երեսունմեկ հազար/ դրամ գումար:

Դեռ 2009 թվականին համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը իրենց առջև խնդիր էին դրել, որ համայնքում մինչև 2012 թվականի ավարտը կլուծեն նոր կոյուղագիծ անցկացնելու խնդիրը և այդ ուղղությամբ տարվել են բավականին աշխատանքներ :

Համայնքի ավագանու որոշմամբ 2012 թվականի համայնքի բյուջեով նախատեսված 5112 «Շենքերի և շինությունների կառուցում» հոդվածից 995000 / ինը հարյուր իննսունհինգ հազար/ դրամ գումար հատկացվեց համայնքի Մ.Սարյան, Ղ.Աղայան փողոցներում և Խ.Աբովյան փողոցի վերջնամասում 600 մետր նոր կոյուղագիծ անցկացնելու համար:
170 մետր նոր կոյուղագիծ անցկացվեց նաև համայնքի Ե.Չարենց փողոցում, որի գումարը կազմում է 155000 / մեկ հարյուր հիսունհինգ հազար/ դրամ:

2012 թվականի առաջին կիսամյակում հիմնովին ավարտվեց նոր կոյուղագծերի անցկացման աշխատանքները, համայնքում այլևս նման խնդիր չկա:

2012 թվականին աշխատանքներ են տարվել նաև խմելու ջրի ուղղությամբ: Համայնքում 2008 թվականին հորատված խմելու ջրի խորքային հորը այս տարի արդեն ինքնաբուխ չէր հոսում: Ուսումնասիրվեց խնդիրը և պարզվեց, որ 70 տնտեսություն խմելու ջուր չունի: Ավագանու որոշմամբ 835000 / ութ հարյուր երեսունհինգ հազար/ դրամ հատկացվեց համայնքի Հ.Թումանյան փողոցի վերջնամասում, Ղ.Աղայան փողոցի 1-ին փակուղում, Պ.Սևակ և Մ.Սարյան փողոցներում նոր ջրագծի անցկացման և խորքային հորի վրա էլեկտրական պոմպի տեղադրման համար:

1-ին կիսամյակում համայնքի թվով 15 ընտանիքների իրենց դիմումների համաձայն տրամադրվել է սոցիալական օգնություն՝ ընդամենը 525000 / հինգ հարյուր քսանհինգ հազար/ դրամ:

1. « Արմավիրի մարզի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»

հասարակական կազմակերպությանը համայնքի բյուջեի 4819 « Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպությունների » հոդվածից հատկացվեց 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ գումար:

2009 թվականից համայնքում ձևավավորվել է մի ավանդույթ, ըստ որի հարազատին կորցրած ընտանիքներին տրամադրվում է 50000/ հիսուն հազար/ դրամ օգնություն, 2012 թվականի 1-ին կիսամյակում հարազատին կորցրած մեկ ընտանիքի տրամադրվել է 50000 /հիսուն ր հազար / դրամ օգնություն:

2012 թվականի 1-ին կիսամյակում բնակիչների պահանջով գրվել է 257 տեղեկանք:

2012 թվականի 1-ին կիսամյակում տեղի է ունեցել 8 ավագանու նիստ, որտեղ քննարկվել են համայնքին վերաբերող տարաբնույթ հարցեր, ինչպես նաև սոցիալական ապահովության կարիք ունեցող բնակիչների դիմումները:

2012 թվականի 1-ին կիսամյակում համայնքում կայացավ 1,45 հա հողերի աճուրդ վաճառք, որի արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվել 434400 /չորս հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր / դրամ եկամուտ:

2012թվականի 1-ին կիսամյանկում գյուղապետարան ստացվել է 26/ քսանվեց/ դիմում.

2012 թվականի 1-ին կիսամյակում 150000 / մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ հատկացվեց գյուղապետարանի պատկանող ՎԱԶ2106 մակնիշի ավտոմեքենան վերանորոգելու համար:

2012 թվականի Զրարբի բյուջեով հաստատվել է 24827100 / քսանչորս միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար հարյուր / դրամի եկամուտ, մուտքագրվել է 11608319 / տասնմեկ միլիոն վեց հարյուր ութ հազար երեք հարյուր տասնինը / դրամ, որը կազմում է ընդհանուր բյուջեի 46,75 %-ը:

2012 թվականի 1-ին կիսամյակում կատարվել են հետևյալ ծախսերը՝

Աշխատավարձի համար ծախսվել է 3641393 / երեք միլիոն վեց հարյուր քառասունմեկ հազար երեք հարյուր իննսուներեք դրամ

Պարտադիր սոց. վճարի համար ծախսվել է 699117 / վեց հարյուր իննսունինը հազար հարյուր տասնյոթ / դրամ

Էներգետիկ ծառայություններ՝

էլեկտրաէներգիայի համար ծախսվել է 113000 / մեկ հարյուր տասներեք հազար/ դրամ, գազի համար՝ 16000/ տասնվեց հազար/ դրամ

Կապի ծառայությունների համար ծախսվել է 36000/ երեսունվեց հազար/ դրամ:

Զրարբի համայնքում առկա և լուծման խնդիր անցնող ծախսատար խնդիրները հետևյալն են՝

1 Մշակույթի տան վերանորոգում.
2 համայնքի փողոցների ասֆալտապատում

Զրարբի համայնքի ղեկավար՝ Ղ.Ղազարյան